«Թեքեյան Կենտրոն» հիմնադրամի կողմից իրականացված ծրագրեր 2021թ.

Դեկտեմբեր, 2021թ.

- Ֆինանսական օժանդակություն Արցախի «Քերոլայն Քոքսի անվան վերականգնողական կենտրոն» ՊՈԱԿ-ին:

- Ֆինանսական օժանդակություն Շուշիից տեղահանված ընտանիքի՝ կացարան ձեռք բերելու համար:

- «Օգնություն Արցախի մեր հայրենակիցներին» ծրագրի շրջանակում ֆինանսական օժանդակություն 10 շաահառուի:

- Ֆինանսական օժանդակություն Վարդուհի Դավթյանի հեղինակած «Վահան Թէքէեան. Յողուածների ժողովածու» գրքի տպագրությանը:

Նոյեմբեր, 2021թ.

- «Անվճար դասագրքեր 2021/2022» ծրագրի շրջանակում Երեւանի, Գյումրիի, Ստեփանավանի եւ Կարբի գյուղի՝ Վ.Թեքեյանի անվան դպրոցների 154 անապահով աշակերտներին 2,149 դասագրքի տրամադրում:

Հոկտեմբեր, 2021թ.

- Օժանդակություն Թեքեյան մշակութային միության «Վահան Թեքեյան» ամենամյա մրցանակաբաշխության 2019-20թթ. ամփոփիչ ձեռնարկի կազմակերպմանը:

Սեպտեմբեր, 2021թ.

- Օժանդակություն պատմաբան եւ քաղաքագետ Արմեն Այվազյանի «Հայ զինվորականության պատվո վարքականոնը» գրքի շնորհանդեսի կազմակերպմանը:

- Օժանդակություն բանաստեղծ Թադէոս Եսայեանի «Պարզ ու տաքուկ բառերով» բանաստեղծությունների հատորի շնորհահանդես-գինեձոնի կազմակերպմանը:

Օգոստոս, 2021թ.

- Օժանդակություն Թեքեյան մշակութային միության կողմից կազմակերպված «Ձնհալն արվեստում» ֆիլմի ցուցադրությանը:

Հուլիս, 2021թ.

- «Օգնություն Արցախի մեր հայրենակիցներին» ծրագրի շրջանակում ֆինանսական օժանդակություն 1 շաահառուի:

Հունիս, 2021թ.

- Օժանդակություն Բերձորի Վ. Թեքեյանի անվան թիվ 1 միջնակարգ դպրոցի աշակերտների «Վերջին դասին», որը կազմակերպել էր «Վերադարձ դեպի Քաշաթաղ» հասարակական կազմակերպությունը՝ դպրոցի տնօրինության հետ:

Մայիս, 2021թ.

- «Թեքեյան Կենտրոն» հիմնադրամի եւ բարերարների աջակցության շնորհիվ Գյումրու Լորդ Բայրոնի անվան թիվ 20 դպրոցի համակարգչային կաբինետը համալրվեց 8 նոր համակարգիչներով:

Ապրիլ, 2021թ.

- Օժանդակություն Քաշաթաղի շրջկենտրոն Բերձորի Վ.Թեքեյանի անվան թիվ 1 միջնակարգ դպրոցի 44-օրյա պատերազմի հետեւանքով տեղահանված ուսուցիչների, աշակերտների ու ծնողների հանդիպմանը Թեքեյան կենտրոնում:

Մարտ, 2021թ.

- «Օգնություն Արցախի մեր հայրենակիցներին» ծրագրի շրջանակում՝ կենցաղային տեխնիկայի, կահույքի եւ այլ պարագաների տրամադրում Բերձորի Վ.Թեքեյանի անվան թիվ 1 դպրոցի զոհված վեց եւ վիրավոր երեք շրջանավարտների ընտանիքներին:

Փետրվար, 2021թ.

- Սննդամթերքի եւ առաջին անհրաժեշտության պարագաների տրամադրում Բերձորի Վ.Թեքեյանի անվան թիվ 1 դպրոցի աշակերտների ընտանիքներին /«Օգնություն Արցախի մեր հայրենակիցներին» ծրագրի II փուլ՝ տեղահանված 61 ընտանիք/:

- Ֆինանսական օժանդակություն Հայաստանում հաստատված երիտասարդ ընտանիքի՝ բնակարան ձեռք բերելու համար: